ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/181

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.11.2018թ. թիվ 26-3/21199-18 գրությամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 14.11.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/17912-18 գրության հիման վրա, 20.11.2018թ. թիվ 26-3/21199-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն 23.11.2018թ. թիվ 096 գրությամբ հայտնել է, որ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն 27.10.2018թ. մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարված «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Աճուրդ) և հավաստել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային պարտավորություններ: Մասնակիցը ՀՀ հարկային օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկով և ժամանակին վճարում է հարկերն ու վճարները, ինչը վկայում են նաև հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում առկա տվյալները: Ըստ այդ տվյալների՝ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն 15.10.2018-19.11.2018թթ. ընկած ժամանակահատվածում չի ունեցել հարկային պարտավորություն-ներ:

Ինչ վերաբերում է դրոշմանիշային վճարներին, ապա Մասնակիցը որպես հարկային գործակալ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը պետական բյուջե է փոխանցում մինչև դրոշմանիշային վճարների չափի հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Համաձայն նույն օրենքի 13-րդ հոդվածի՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին, սակայն նման ծանուցումներ Մասնակիցը չի ստացել:

«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/181 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.11.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/17912-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, որը մի շարք չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀԿ-ի վերաբերյալ ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հարցում է ուղարկվել ՀՀ ՊԵԿ, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն՝ ՀԿ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ (43000 ՀՀ դրամ), որը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/181 ընթացակարգի շրջանակներում 23.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 27.10.2018թ. հայտ է ներկայացրել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Աճուրդի 1-5-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետի հիման վրա 05.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 000 ՀՀ դրամի չափով:***

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 06.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2018թ. թիվ 26-3/21199-18 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 14.11.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/17912-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես

նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն. զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված

հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 27.10.2018թ. հայտ է ներկայացրել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն:

Մասնակիցը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Աճուրդի 1-5-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 05.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 000 ՀՀ դրամի չափով:***

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 06.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի հայտը մերժվել է:

Այսպես՝ հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.2-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 27.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 43 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Մասնակցի կողմից Աճուրդի 1-5-րդ չափաբաժինների մասով ներկայացված վերջնական գնային առաջարկի (1-ին չափաբաժին՝ 215 200 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 2 836 280 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 29 700 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժին՝ 7500 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժին՝ 6000 ՀՀ դրամ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մեկ տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ***27.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով 27.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Մասնակիցը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն «ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-18/57» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.11.2018թ. թիվ 26-3/21199-18 գրությամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին (ՀՎՀՀ՝ 02252332) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ